



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ԶԱՐԲԱՅԻ ՔԱՀԱՆԱՅ ԿԷՋԻԻՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 23 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1910

ԹԻԻ 30

«ՏԱՃԱՐ», Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դրու
Փառառաց համար տարեկան	40 »
Արսասահմանի համար տարեկան	10 ֆրանկ
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

Բաժանորդագիրները կանխիկ են

«ՏԱՃԱՐ»-ի թէ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ
Զարմայր Քահանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեփիքաւ, Հայոց եկեղեցի

درسماعده بشکطاشده ارمی کلیسائنده (داجاز) غزتمی مدیری پاپاس زارمار

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache Eglise Arménienne

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

Զարմաքճըլար, Յալոթեան խան

ԽՄԲԱԴՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Ծ. Վրդ. Գալէմքեարեան
2. Տ. Տիրայր Ծ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
4. Տ. Սուրէն Վրդ. Գալէմքեան
5. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
6. Տ. Արիստակէս Բնյ. Հիսարկեան
7. Տ. Զարմայր Բնյ. Կէզըրեան

ՎԱՐՁԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
3. Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուքիաս Բնյ. Պալքճեան
5. Տ. Պողոս Բնյ. Պէյաղճեան
6. Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
7. Տ. Գէորգ Բնյ. Անանեան
8. Տ. Գրիգոր Բնյ. Ճէպէճեան

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«Տ Ա Ճ Ա Ր» ԿՐԾՆԱԹԵՐԹԻ

ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ.—Առաջն. Փոխանորդ
Տ. Արսէն Բնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ.—Տ. Ռուբէն Բնյ. Գա-
րիկեան
ԱՄԵՐԻԿԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Գաֆթանեան
ԱՅՆԹԱՊ.—Տ. Գարեգին Բնյ. Պողարեան
ԱՅԻՕՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ.—Տ. Խաչատուր
Ա. Բնյ. Տօնէլեան
ԲԱԲԵՐԴ.—Մ. Սանտեան էֆ.
ԳԱՂԱՏԻԱ.—Առաջնորդ Տ. Բարգէն Եպսկ.
Կիւլէսէրեան
ԳԱՀԻՐԷ.—Տ. Յարութիւն քնյ. Սար-
գիսեան
ԵԴԵՍԻԱ.—Բ. Թիւրաքեան էֆ.
ԵՕԶՂԱՏ.—Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ.
Դիմաքեան
ԵՐԶՆԿԱ.—Առաջնորդ Տ. Երուանդ Վրդ.
Փէրտանճեան
ԶՄԻՒՆԻՍ.—Տ. Յարութիւն Բնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ.—Տ. Դալուստ Բնյ. Տ.
Դալուստեան
ԽԱՐԲԵՐԴ.—Առաջն. Տեղապահ Տ. Գէորգ
Ծ. Վրդ. Ասլանեան
ԿԱՐԻՆ.—Առաջնորդ Տ. Սմբատ Եպսկ.
Սաւտէթեան
ԿԻՐԱՍՈՆ.—Մաթոս էֆ. Թոքատլեան
ԿԻՒՄԻԻԼՃԻՆԷ.—Տ. Ներսէս Բնյ. Նշան-
եան
ՀԱԼԷՊ.—Առաջն. Տեղապահ Տ. Շահէ
Վրդ. Գասպարեան
ՄԱՆՉԷՍԹԸՐ.—Առաջնորդ Տ. Գէորգ Ա.
Եպսկ. Իւթիւճեան
ՄԱՐԱՇ.—Տ. Հմայեակ Բնյ. Վարժա-
պետեան

ՄԱՐԶՈՒԱՆ.—Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻՍ.—Տ. Ոսկի Բնյ. Պիպիեան
ՆՈՐ ԶՈՒՂԱ.—Առաջն. Փոխանորդ Տ.
Բաղարատ Վրդ. Վարդապետեան
Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ.—Տ. Նաթան Բնյ.
Տառեան
ՈՒՇԱՔ.—Կարապետ էֆ. Բէհեանեան
ՊԱՆՏՐՄԱ.—ՊԱԼԷՔԻՍԻՐ.—Առաջնորդ Տ.
Կարապետ Եպսկ. Մալլումեան
ՊԱՂՏԱՏ.—Առաջնորդ Տ. Մովսէս Ա.
Եպսկ. Կէօմբիւքճեան
ՊԱՅՐԱ.—Կարապետ էֆ. Բէրթմէնեան
ՊԱՐՏԻՉԱԿ.—Յովհաննէս էֆ. Տ. Կա-
րապետեան
ՊՐՈՒՍԱ.—Առաջնորդ Տ. Յովհաննէս Ա.
Եպսկ. Արչարունի
ՌՈՒՍՃՈՒՔ.—Տ. Մկրտիչ Բնյ. Մըրջ-
նիկեան
ՌՈՏՈՍԹ.—Առաջն. Փոխանորդ Տ. Բար-
թող Ա. Բնյ. Թադմճեան
ՍԱՄՍՈՆ.—Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ.
Օտապաշեան
ՍԵԲԱՍՏԻԱ.—Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բնյ. Օտապաշեան
ՍԵԼԱՆԻԿ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բնյ. Թուխմանեան
ՍՕՅԻԱ.—Տ. Մեսրոպ Բնյ. Տ. Մեսրոպ-
եան
ՏԱՐՏԱՆԷԼ.—Տ. Դիմեհիտ Բնյ. Տըէզ-
եան
ՏԷՏԷ-ԱՂԱՃ.—Տ. Դարեգին Բնյ. Տէօլ-
լէթեան
ՏԻԴՐԱՆԱԿԵՐՏ.—Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏԻՄԷԹՕԳԱ.—Տ. Գէորգ Բնյ. Թէրզեան
ՏՓՂԻՍ.—Հ. Առաքելեան
ՓԱՐԻՉ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Վառձա-
պուհ Բնյ. Բիպարեան
ՔՂԻ.—Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.
ՖԻԼԻՊԷ.—Տ. Տաճատ Բնյ. Դերձակեան
ՖՐԷՉՆՕ.—Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՔԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՏԱՔԱԹ, 23 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1910

ԹԻԻ 30

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.—Ամուրի՞ Թէ ամուսնացեալ եկեղեցականութիւն, ՊՕՂՈՍ Վ. ԳԱՅՔԱՆԵԱՆ.—Սիրոն փարիսեցին եւ մեղաւոր կիներ, ՂԵՒՈՆԴ Մ. Վ. ԴՈՒՐԵԱՆ.—ՄՈՌՑՈՒԱՆԻ ԷԶԵՐ, Քանա-նայ, ԳԱՄԱՌ-ՔԱԹՊԱՅ.—ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԵՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ, Պուէտ Խ. Միսաք-եան, (Դ.) ԱՏՐՈՒՇԱՆ.—Պատմ. Հայ. Զայնագրութեան, (Շար.) ԱՐԻՍՏ. ՔԶ. ՀԻՍԱՐԼԵԱՆ.—Հայկ. Բա-րեգործական ընդհ. Միութիւն, Ակնարկ մը իր տարեկան տեղեկագրին վրայ, ԶԱՐՄԱՅՐ ՔԶ.—ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ, Շաքեւուան լուրեր եւ ժողովոց որոշումներ:

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԱՄՈՒՐԻ՞ Թէ ԱՄՈՒՍՆԱՅԵԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ամէն կրօնական կողմակերպութիւն աւ-րիններու ընթացքին մէջ ժողովներ կը գու-մարէ, բարեփոխելու իր կանոնները: Նո-րանոր յարանուանութիւններ բարեկար-գուեցան և յառաջադիմեցին, և մենք պա-րագաներու բերմամբ մնացինք ա՛յն՝ ինչ որ էինք դարեր առաջ, կորսնցնելով նաեւ երկու զլխաւոր հաստաւաններ, որ փոխա-նակ կենալու և պահանջելու ազգային վե-րածնութիւն մը՝ ստիպուեցան հեռանալ դասալիք:

Այժմ, ՎԵՆ. Հայրապետը կը բարեհա-ծի Համագումար հաւաքել, Հայ Եկեղեցին վերակենդանացնելու նպատակաւ: Կրնանք

յուսալ թէ դարագլուխ կազմէ այս ընդ-հանուր ժողովը, և գուցէ մեր անշատեալ ազգակիցները օր մը կրկին միացնելու պատճառ ըլլայ, եթէ էական փոփոխու-թիւնները խնամով կատարուին, և մեր հնադարեան փառապանծ Եկեղեցին յա-ջովինք տալ իր նախնական փայլը և զայն վերանորոգենք:

Արդէն Ազգիս երկու՝ դասակարգէն ալ, եկեղեցական և աշխարհական, առա-ջարկեցին զանազան խնդիրներ՝ կղերին մաքրադարձման, Դպրեվանքի կանոնաւո-րութեան, եկեղեցւոյ աւելորդ զարդերը վերցնելու, ժամերգութիւններն և արա-րողութիւնները համառօտելու, ամուսնու-թեանց օրէնք և կանոններ սահմանելու, ևն., որոնց համամիտ են անտարակոյս լուսամիտներն և եկեղեցւոյս բարեկար-գութեան նախանձախնդիրք: Սակայն պաշ-տօնական սուաշարկներու մէջ նախընտրելի կը համարիմ Ազգիանուպոլսոյ Կրօն. Ժո-ղովինը, և ի մասնաւորի եկեղեցականաց

ամուսնութեան և անոնց հաւասար առանձնաշնորհումներ տրուելուն մասին եզած թելադրութեանց ես ալ կը ձայնակցիմ : Մեհրուժանի եկեղեցական կարգէն հրաժարելուն առթիւ, քանի որ Տաճարի Պատ. Խմբագրութիւնն ալ կոչ կ'ուզէ ընթերցողաց, և կը ցանկայ անոնց կարծիքն առնուլ հրաժարեալ եկեղեցականին հոժեկու բողոքին նկատմամբ ընդդէմ կուսակրօնութեան, կ'ուզեմ պարզիլ իմ տեսութիւններս :

Կ'ենթադրեմ թէ եկած ըլլայ ժամանակը, յորում Հայ Եկեղեցին արտաքին և նիւթական բարեկարգութիւններէն աւելի, անհրաժեշտ համարի զլուս հանել իր պաշտօնէից բարոյական վերածնութիւնը. քանի որ առաջինք կրնան մնալ ամուլ կարգադրութիւններ՝ եթէ չվերանորոգուին նախ եկեղեցականներու ներքին տաճարները, որ պէտքի անբասիր վարուք ծառային Աստուծոյ ժողովրդեան, այն է Հայ Ազգին բարոյական և իրական վերակենդանացման :

Մեհրուժանի յայտարարութիւնն անկեղծ կը տեսնենք և իրաւացի : Անհիմն է կուսակրօնութիւնը և հակաբնական, ժամանակին բերմամբ ներմուծուած, եղծիչ բարոյականի և արմատ գայթակղութեանց, և մանաւանդ եկամուտ սովորութիւն Հայ Եկեղեցւոյ մէջ : Այդ օրէնքին գոյութենէն բխող աղէտներուն պատասխանատու և պատճառ՝ եկեղեցական իշխանութիւնն է, որ դժբախտաբար ցայսօր անտարբեր դանդաղաւ դարմանին, և գիտնալով թէ երիտասարդ ընծայացուն որ կ'ընդգրկէ այդ վիճակը, ստիպուած է ակամայ իսկ ընդունիլ պայմանն որոյ դէմ ապագային պիտի դրժէ, կը ձեռնադրէ զայն դարձեալ : Եւ մինչ կ'աղօթէ մէկ կողմանէ. «Վասն չանկանելոյ մեզ ի փորձութիւն որում ոչ կարեմք հանդուրժել», միւս կողմանէ գիտակցաբար կը մղէ անփորձ երիտասարդը անհանդուրժելի փորձութեանց : Բնութեան օրինաց դէմ մաքառիլ անհնար է. «Իսկոյն է ընդդէմ խթանի աքացել» :

Ո՛չ Ս. Գիրքն է որ կը պարտաւորէ մնալ կուսակրօն, և ոչ մեր Ս. Հարք՝ Լուսաւորիչ, Վրթանէս, Յուսիկ, Ներսէս կամ Սահակ. ցցուն ապացոյց՝ անոնց օրինակ-

ները : Ո՛ւր է մեր փառքը, երբ կը պարծինք թէ մեր Հարց աւանդական կարգ ու կանոնները պահած ենք անաղարտ :

Մեր կուսակրօնները սահմանուած էին վանքերու մէջ ապրիլ, անապատներու մէջ ճգնիլ. եթէ պաշտօնի կոչեցինք զանոնք ժողովրդեան մէջ և հնոցի բոցերուն մատնեցինք զիրենք՝ աւելցնելով լուծ մը վրանին, միջավայրին համեմատ թեթեւցնելու էինք անոնց կուսակրօնութեան լուծը : Համագումարը պէտք է կա՛մ անապատներ վերադարձնէ կուսակրօնները, փոխանակելով զանոնք ամուսնացեալ եկեղեցականաց հետ, և կամ թողատրէ որ ազատ ըլլան ամուսնանալու : Եթէ ժողով մը ձայներու մեծամասնութեամբ բռնաբարեր է երբեմն բնութեան օրէնքը, աւելի քան տանեակ դարեր վերջ՝ նոյն ձայնը պէտք չէ կապէր և կաշկանդէր—գաղափարաց այս ազատ դարուն — սերնդոց ազատ կամքը :

Եկեղեցականներու կուսակրօնութեան սկզբունքը խարխուլ հիմքերու վրայ հաստատուած է : Գրիստոս սիրեր է, կ'ըսեն, կուսակրօնութիւնը, և Առաքեալներէն Յովհաննէս կոյս ըլլալով՝ նախնարար է զայն խաչին վրայէն յանձնարարելու Տիրամօր, իբր զաւակ : Կուսակրօնք, կը յուելուն, աւելի ազատ կ'ըլլան լաւագոյն ծառայելու Աստուծոյ ժողովրդեան, չունենալով ո՛ր և է աշխարհային զբաղում. և դարձեալ, աւելի նմանութիւն կ'ունենան երկնային հրեշտակներու :

Ամէն դար ունեցած է իր ժամանակին մտածութեանց և գործելակերպի սեփական և յատուկ բնադրոշմ. այդ դարերու գաղափարները փոխուած են ներկայիս : Ներկայ դարս Ս. Մեսրոպ մը չի ծնանիր, Նարեկացիներ չ'երկնիր. այդ հրեշտակային վարդապետները շատոնց դասուած են անդին հրեշտակաց քով. մարդկային բնութիւնը թէ և նոյն մնացած՝ սակայն մտածելակերպի եղանակը փոխուած և աշխարհի ընթացքը յեղաշրջուած է : Նոյն ժամանակ տարբեր ըմբռնումներով էր որ կ'ապրէին մարդիկ, յաւիտենականութիւն մը, հանդերձեալ կեանք մը միայն նկատելով՝ ներկայ դարուս մէջ կ'ուզէին աւելի գիտակցա-

բար ապրիլ՝ նախ աշխարհի վրայ ըստ պատ-
շաճի իրր մարդ, վասն զի կեանքը Աստու-
ծոյ գերադոյն պարգեւներէն մին կը հո-
մարին, շնորհուած իրենց՝ ա՛յս աշխարհիս
համար, որուն պիտի յաջորդէ ապա յաւի-
տենականութիւնը կամ հանգերձեալ կեան-
քը. «Զայս պարտ է առնել, կ'ըսեն Բրիս-
տոսի հետ, և զայնու ոչ անցանել», միեւ-
նոյն Աւետարանի՛ն հիմնուելով և անոր
ոգևոյն աւելի ճիշդ թափանցելով քան եր-
բեմն, Կ'ուզեն վաստակիլ՝ միանգամայն
վայելիլ աշխարհս պարկեշտօրէն և իր օրի-
նաւորութիւններովը, լաւագոյնս արժանա-
նալու և վայելելու յաւիտենականութիւնը :
«Որովհետեւ ի սակաւուն հաւատարիմ եղեր,
ի վերայ բազմաց կացուցից զքեզ» . այդ
սակաւին հաւատարմութիւնն իրենց համար
ներկայ աշխարհէն կը սկսի :

Ներկայ դարս Դուբեռններ կրնայ ծնա-
նիլ, Տէնցաներ, Կոմիտաս վարդապետներ,
Բէքօղլներ, վասն զի փոխուած են ճաշակ-
ները, և սերնդոց վրայ ազդած : Ներկայ
դարուս մէ՛ջ ալ կայ հաւասար աստուա-
ծապաշտութիւն՝ ինչ որ կար Սլանակեցի-
ներու ժամանակ. սակայն տարբեր եղանա-
կաւ, առանց մոլեռանդութեան, առանց
անապաշտութեան, առանց անապատական
զոհաբերութեանց և ճգնութեանց . և եթէ
ակներեւ չենք նշմարեր զայն ժողովրդեան
վրայ, և կ'ենթադրենք թէ ուժացած ըլլան
անոնք կրօնքէն և եկեղեցիէն, մե՛նք ենք
մեղադրելի, որ չենք նկրտիր վերական-
գանացնել զանոնք և եկեղեցիներ, ընթանա-
լու դարուս ոգևոյն և պահանջներուն հա-
մեմատ :

Անցած է կուսակրօնութեան դարը, և
անունը ժառանգութեան մնացած : Գեր-
մանիոյ, Աւստրիոյ և շատ մը տեղեաց
հռոմէական մոլեռանդ երեցող կղերն իսկ
երկպառակած՝ սկսած է յուսահատ պայ-
քարը անոր դէմ : Եթէ Երուսաղէ, Պալեստին,
Մեհրուստի քաջուցան ասպարէզէն, առա-
ջինները չեն և ոչ վերջինները կրնան հա-
մարուիլ . մեղադրելի են սակայն մասամբ
մը, վասն զի պէտք չէին ա՛յս կերպով
հեռանալ . պէ՛տք էր կանգնիլ, միանալ,
դիմել Հայրապետին, խնդրել, բողոքել և

պահանջել . փոյթ չէր թէ հյաջողէին, քանի
որ ապագային յաջողութիւնը այլ ևս ժա-
մանակի խնդիր միայն կրնայ համարուիլ :
Կալիլէոս բանաբն արձակուած ժամանակ
զարկաւ ոտքը դրանը սեմին և գոչեց . «Եւ
սակայն աշխարհս կը շարժի :»

Մերձաւոր ժամանակի մէջ մի և նոյն
դէպքերը պատահեցան յԱմերիկա : Խաղ-
կարգազուրկ հոշակուեցաւ և հոգեւոյս հայ-
րապետը հրամայեց որ մե՛նք պսակենք :
Մալթոյ ինքն իրեն հրաժարեցաւ, Աճէմեան
ասպարէզէն քաշուեցաւ, Նազարէթեան
ամբաստանութեանց ներքեւ ընկճեցաւ, Շի-
րիսեան դատաւիտեցաւ : Ի՞նչ արժանա-
պատուութեան կրնայ մնալ եկեղեցակա-
նութեան վրայ :

Ժամանակը պիտի անմահացնէ Խրիմեանի
յիշատակը, որ համամիտ էր քահանայից
կրկնամուսնութեան՝ եթէ համաձայնէին
կրկին Պատրիարքներն և Սոյ կաթողիկոսը :
Վերջինս մերժեց, և Յարութիւն Պատրի-
արք կ'ըսէր թէ «Ո՛վ որ իր հարց սահ-
մաններն անցնի՝ անապատի օձը զայն պիտի
խայթէ» : Այդ օձը վաղճւց խայթեց զմեզ,
քանի որ Լուսաւորչի և յաջորդներուն սահ-
մանները քանդելով ներմուծեցինք աշխար-
հական կղերին մէջ կուսակրօնութիւնը : Իսկ
Օրմանեան Պատրիարք, որոյ քաղաքակա-
նութիւնն էր ժողովի մը բերանով ուղածը
խօսիլ, պատասխանեց թէ Պոլսոյ Կրօն .
Ժողովը համամիտ չէ : Համիտեան բռնա-
կալութեան ընթիմին օրերն էին, և անհնար
էր Հայրիկի համար ընդհանուր ժողով գու-
մարել, հրաւիրելով եկեղեցական և աշխար-
հական նուիրակներ : Եւ նոյն տարին, Սեպ-
տեմբեր 2, 1906, Ամերիկահայոցս երես-
փոխանական առաջին ժողովը գումարե-
ցաւ, յորում ներկայ գտնուող 19 երես-
փոխանք, եկեղեցական և աշխարհական,
միաձայնութեամբ դիմեցինք հոգեւոյս Հայ-
րապետին՝ խնդրելով թոյլատրել կուսա-
կրօններու ամուսնութիւնը :

Եթէ Անգլիքան Եկեղեցին մեզի քոյր
կ'անուանենք և Բրիտանեայ Եկեղեցինե-
րուն մէջ ամենէն մերձաւորը, դարերէ ի
վեր վերցուցած են անոնք կուսակրօնու-
թիւնը, և այսօր ամենէն աւելի զարգացած,

մաքրուած և փալլուն դիրքի տիրացած։ Մի և նոյն բաղդին պիտի վիճակակցինք, եթէ հետեւինք անոնց օրինակին և ազատ թողունք մուտքը լուսամիտ և ուսեալ աշխարհականներու՝ ընդգրկել նոր ասպարէզը և վայելել անխտիր նաև բոլոր առանձնաշնորհութիւնները, մինչև Հայրսպետական Աթոռ բարձրանալու ըստ արժանեաց։ Ինչո՞ւ զրկուի ազգերնիս կարող անձնաւորութիւններու եռանդուն գործունէութենէն՝ նկատելով իբր արգելիչ պատճառ մը անոնց ամուսնացած ըլլալը, կամ ինչո՞ւ կուսակցոնութիւնն իբր անհրաժեշտ պայման համարուի՝ նուազ արժանաւորի մը բարձրագոյն պաշտօն յանձնելու։

Հայ Եկեղեցւոյ պաշտօնեայք, կուսակրօն թէ ամուսնացեալ, միեւնոյն դրօշի ներքեւ հաւասար կը ծառայեն Ազգիս, և նոյն Եկեղեցւոյ հարազատ զաւակներն են անխտիր։ Միացեալ Նահանգաց հասարակապետութեան մէջ ծնող ամէն քաղաքացի, առանց ազգի խտրութեան, կարող է մինչև նախագահական աթոռ բարձրանալ ըստ իւր արժանեաց, վասն զի միեւնոյն դրօշի ներքեւ է իր հայրենիքը։ Այս եղանակով միայն պիտի յաջողինք ունենալ մերձաւոր ապագային տիպար եկեղեցակաւորութիւն մը, պատուաբեր և օրինակելի։

Ժամանակն է հասունցնելու այս խնդիրը, և ունենալու եկեղեցականաց և աշխարհականաց լուրջ դիտողութիւնները։ Ես պիտի սիրէի յատկապէս կոչ ընել նաև իմ կուսակրօն եղբայրակցացս՝ իջնել ասպարէզ և պարզել անկեղծօրէն իրենց դիտողութիւնները՝ առանց նկատուիներու և վերապահութեանց՝ քանի որ հասարակային խնդիր մըն է։ Ազատ երկրի և զաւապարաց դարուս մէջ ամէնքնիս մէկ սիրտ և մէկ հոգի՝ անտարակոյս դե՛ռ աւելի անձկացող է հետապնդող ենք մեր սիրելի Ազգին և Եկեղեցւոյն հաստատութեան և պայծառացման։ Եւ Համագումարը պիտի յաջողի այն ատեն վերջ մը տալ քանի՜ցս յուզուած սոյն կնճռոտ առեղծուածոյն, և փակելով հին դարը՝ սկսիլ պիտի տայ յուսոյ և լուսոյ նոր դարագլուխ մը։

ՊՈՂՈՍ ՎՐԴ. ԳԱՅՅԱՆԵԱՆ

Նիւ Եօրթ

Ծ. ԽՄԲ. — Մերով կը հրատարակենք Ամերիկայոց հոգեւոր հովիւին այս գրութիւնը, որ Եկեղեցական Բարեկարգութեանց ամէնէն ստիպողականին՝ Հայ Եկեղեցականութեան բարոյապէս բարձրացման խնդիրը կը շօշափէ։ Դեր. յօդուածագիրը, ուրիշ շատերու հետ, այդ բարձրացման համար էական պայման կը նկատէ ամուսնացեալ կղերիկ տալ այժմ ունեցածէն աւելի լայն իրաւունքներ, և սահմանափակել—լաւ ևս ջնջել—կուսակրօնին դերը, աշխարհիկ կեանքին մէջ։ Նոյնքան սիրով պիտի հրատարակենք տարբեր կարծիք ունեցողներու փաստերն ալ, ինչոքոյն թեր ուղէմ ձեռնուէն յառաջ բերելու համար լոյսը ի փառս և ի պայծառութիւն Հայ Ս. Եկեղեցւոյ։

ՍԻՄՈՆ ՓԱՐԻՍԵՑԻՆ

ԵՒ ՄԵՂԱՒՈՐ ԿԻՆԸ

Սիմոն Փարիսեցի. — Հրեական ստիճարիւնները ճաշի ժամանակ. — Ապաշխարող կիւր. — Սիմոնի դժգոհութիւնը. — Բրիստոսի պատասխանը. — Պատասխաններու առակը. — Սիմոնի սառնանաբերութիւնը. — Մեղեքոս քողարկը. — Մարիամ Մագրաբեմացի՞ն եր աղէօք այդ մեղաւոր կիւր։

Յիսուս Նայինէն անցաւ Մագթաղա քաղաքը, այժմ Մհսնէյ կոչուած գիւղը։ Մագթաղա կը գտնուի Գալիլիոյ ծովակին արեւմտեան կողմը. իր հիանալի պայծառ երկինքովը ու բնական ամէն ճոխութիւններովը առաջնակարգ դիրք մը կը գրաւէ Գալիլիոյ ծովակին եզերքը. ճանապարհորդը Մագթաղայի մօտեցած ատեն առաջին առաթիւ աչքին կը զարնէ գիւղին մէջտեղ բարձրացած միակ մեծ արմաւենին, որ կարծես կը տիրէ ամբողջ գիւղին վրայ, առտ անդ կ'երեւին ամրոցներ ու աւերակներ, սղքատ ու կիսաւեր խրճիթներ. յայտնի է

թէ Յիսուսի ժամանակ ամուր և ճոխ քաղաք մըն է եղեր: Գլուխն բնակչութիւնը բնութեան ամէն գեղեցկութիւնները կը վայելէ. ամէն կողմ կանաչութիւն և գոյն-զգոյն ծաղիկներ կ'երեւին, թռչուններու դալալայիկն աւելի մեծ հրճուանք կը պատճառէ ճանապարհորդին: Հոս էր որ Յիսուս հրաւիրուեցաւ ճաշի, երեւելի փարիսեցի Սիմոնէն (Ղուկ. է. 30—50): Այս հրաւերին պատճառը կամ նպատակը չենք գիտեր. բայց յայտնի է որ Սիմոն Յիսուսը հրաւիրեց իր ջիւրմ բարեկամութիւնն ու համակրանքը յայտնած և պատիւ ընծայած ըլլալու համար: Փարիսեցի Սիմոնը պէտք չէ չփոթել Բորոտ Սիմոնի հետ. վերջինը կը բնակէր Բեթանիա որուն տունը Յիսուս ընթրեց. այս Սիմոնը «փարիսեցի» անունով ծանօթ է, և կը բնակէր հաւանականաբար Մագթաղա:

Այս հիւրընկալութեան ժամանակ սովորական արարողութիւնները ի գործ չդրուեցան. ո՛չ ջուր բերին Յիսուսի և իր հետեւող աշակերտներուն ոտքերը լուանալու, ո՛չ բարի գալստեան ողջոյն մատուցին, ո՛չ ալ մաղերու համար անուշ իւղ սրսկեցին. այլ որովհետեւ ճաշի ժամանակը անցնելու էր, ուղղակի ճաշի սեղանի նստան ամէնքն ալ:

Ասորիքի և Պաղեստինի մէջ հին ժամանակի Հրեայք ճաշի սեղանի առթիւ մեծ բուրբակ կաշի մը կամ օթոց մը գետինը կը փռէին և օթոցին շուրջը բոլորակաձև ծալապատիկ կը նստէին. ճաշողներու առջև ցած սեղանին վրայ մեծ ամանի մը մէջ կերակուր դնելով՝ ամէնքն անոր մէջէն կ'ուտէին. մինչև հիմակ այս սովորութիւնը շատ տեղեր Արեւելքի մէջ դեռ մնացած է: Այս սովորութիւնը Բաբելոնի գերութենէն յետոյ Հրեայք թողուցին, և Պարսիկներու, Բաղդէացիներու և Հռոմայեցիներու սովորութիւններուն համեմատ ընկողմանած կը ճաշէին, փոխանակ ծալապատիկ նստելու: Յիսուսի ժամանակ ևս Հռոմայեցւոց պէս սեղան կը սարքէին. երեք երկար սեղաններ այնպէս մը իրարու քով կը դնէին որ քառակուսիի մը երեք կողմերը կազմէր. այս սեղաններուն շուրջը ոչ թէ աթոռներ

չարած էին, այլ լայն բազմոցներ՝ ծայրէ ի ծայր պաստառալիք և շատ անգամ նաև գեղեցկապէս զարդարուած (Եսթ. Ա. 20): Ծաշելու համար սեղանն նստողներն ընկողմանած ձևով կը նստէին. այնպէս որ զլիով սեղանին վրայ հակած, ձախ արմուկնին բազմոցին կրթնցուցած, իսկ աջը ազատօրէն կերակուրի համար կրնային շարժել. այս ընկողմանած ձևով ճաշելու ատեն, բնականաբար բազմոցին վրայ հակած անձին ոտքերը բազմոցէն դուրս երկնցած կ'ըլլային, այնպէս որ բազմոցին ոտքերը սեղանին ետեւի կողմէն անցնողին ամենէն աւելի մօտ կ'ըլլային: Ինչպէս փարիսեցի Սիմոնին տունը, նմանապէս և Պասեքին վերջին ընթրեաց առթիւ այս դրութեամբ նստած ճաշ ըրին Յիսուս և իրենները:

Ընդհանրապէս սեղանի կերակուրներն էին միս, ձուկ կամ հաւ, կոզի, մեղր, հաց և միրգ. միայն ընդհանրապէս մանր մօնք կտրած կ'եփէին կամ կը խաշէին, և հալած կոզիով բանջարով մեծ սկաւառակի մէջ դրուած կը բերէին սեղան և կը բաշխէին: Դանակ, պատառաքաղ, դգալ ծանօթ չէր. այլ մատները կը կատարէին անոնց դերը:

Այն ինչ սեղանի նստած և անուշ խօսակցութիւններով կը ճաշէին, յանկարծ տունէն ներս մտաւ չափազանց գեղեցկութեամբ և նորասաց շնորհալիութեամբ հերարձակ կին մը. անիկա իր կեանքով շատ ծանօթ էր այդ շրջանակներուն մէջ. մեծ անուն հանած էր իր շուրջ. գթութիւն հրաւիրող իր նայուածքովը, ծարիրով գեղանկարուած իր յօնքերն ու մազերը զիմագծին աւելի գեղեցկութիւն տուած էին. միւս կողմէ յայտնի էր թէ անպարկեշտ կին մըն էր: Ընթերցողը չպիտի զարմանայ թէ ինչպէս կ'ըլլայ որ Սիմոնի տունը կրնայ մտնել նոյն իսկ անպատուութիւն բերող, բարոյակամը քայքայուած կին մը, եթէ տեղեակ ըլլայ թէ Արեւելքի մէջ ամէն տուն ամէնուն համար բաց է, ամէն տուն բաց դուռով կ'ապրի. ամէն ոք անարգել ամէն ժամանակ կարող է ներս մտնել կամ դուրս ելնել. այսքան ելեւմուտքը անարգել ըլլալուն՝ բնական է որ Սիմոնի տունը կրնար մտնել այդ կիջն ալ, որ երբ իմա-

ցած էր թէ Յիսուս Փարիսեցիին տունը ճաշ կ'ընէ, համարձակութեամբ մտած էր և Յիսուսի նստարանին մօտեցած: Ի՞նչ բան ունէր այս կինը Քրիստոսի մօտ. թե՛րեւս ունկնդրած էր Քրիստոսի վերջին քարոզը, լսած էր անոր քաջալերիչ հրաւերը. «Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ» (Մատթ. ԺԱ. 28). այս հրաւերին վրայ անշուշտ քաջալերուած էր երթալ Յիսուսի մօտ. թէպէտեւ մեղաւոր էր, բայց այժմ զգացած էր իր զարհուրելի կործանման դիմելը և զղջացած էր, հիացած էր Յիսուսի վարդապետութեանց բարոյական բարձրութեանը, սքանչացած էր անոր ամբիժ ու անարատ կեանքին, և իր մեղադրելի ու մեղսալից կեանքին վրայ դառնացած, ամօթխած յուզումով՝ իրր նորոգեալ հոգի մօտեցած էր Յիսուսի, անոր ոտքերուն սուշ և ծնրադիր: Կինը իր ձեռքը ունէր անուշահոտ չիշ մը իւղ, զոր անշուշտ ի սկզբան բոլորովին ուրիշ նպատակի համար գնած էր (Սաակ Է. 17. Ես. Գ. 24). այսու ամենայնիւ այժմ կ'ուզէր սուրբ նպատակի համար գործածել: Քանիսնէր արդեօք այդ անուշահոտ իւղով իրեն հաճեցուցած և մոլորեցուցած էր, բայց այժմ այդ իւղով Քրիստոսի գթութիւնն ու կարեկցութիւնը կը հրաւիրէր և կը հաճեցնէր:

Փարիսեցին այսպիսի մեղաւոր կին մը իսկոյն դուրս պէտք է հանէր, ո՛ւր մնաց որ թոյլ տար արցունք թափելու. փարիսեցին անպարկեշտ կնոջ տունէն ներս մտնելովը պղծուած կը համարէր ինքզինքը այլ ևս, և անհրաժեշտ էր որ եօթն անգամ ջրով լուացուէր. սակայն քաղաքավարութեան համար չըրաւ: Երբ կինը զգաց որ Յիսուս իրեն հետ բարեացակամութեամբ կը վերաբերուի, և նոյն իսկ փարիսեցիէն չարտաքսուիր, աւելի քաջալերուած սկսաւ Քրիստոսի ոտքերը համբուրել այն շրթունքներով որով շատ պակասամիտներ հրապուրած էր (Սաակ. Ե. 3. Է. 13), և ձեռքի անուշահոտ իւղով լեցուն չիշը թափել ու Յիսուսի ոտքերը օծել:

Կնոջ վար թողուցած մագերը, իր անցեալ վիճակին վրայ զղջման խայթը, արա-

զավազ արցունքները, անուշահոտ իւղ թափելը ու դառնացած սրտաբեկ վիճակը, այս ամէնն արդէն նոյն իսկ քարսիրտ մարդու մէջ կարեկցութիւնը կ'արթնցնէ. բայց փարիսեցի Սիմոն այս ամէնուն վրայ զըզուանքով և սառն ողւով կը նայէր. յուսահատ ու սրտաբեկ կնոջ բոլոր աղերսական շարժումները ո՛չ մէկ ազդեցութիւն չկրցան ընել Սիմոնի վրայ: Սիմոն նոյն իսկ ներքի չէր նկատեր որ Յիսուս այդ անպարկեշտ կնոջ թոյլ տար ոտքերն համբուրելու, իւղով օծելու. ուստի զարմացմամբ կ'ըսէր մտովին. «Եթէ նա մարդարէ եղած ըլլար, պէտք է զիտնար թէ ո՛վ է այս կինը. և անշուշտ եթէ հասկնար կնոջ ինքնութիւնը այն ժամանակ անկէ պիտի զգուշանար և թոյլ պիտի տար կնոջ որ իրեն մօտենայ»: Սիմոն ինքնիրեն այսպէս կը խորհէր, և կը սպասէր որ Փրկիչը անկարկով մը իրեն հասկցնէր դուրս հանել այդ անպարկեշտ համարուող կինը. այդ տեսակ հրաման մը չուտով և գոհունակութեամբ պիտի կատարէր:

Սիմոն բոլոր այս մտածումները բարձր ձայնով չարտայայտեց. բայց իր սրտաքին շարժումներէն, և դէմքին արհամարհանքի և զղուանքի արտայայտութենէն ցոյց կը տրբուէր թէ իր սրտին մէջ ի՞նչ կ'անցնէր կը դառնար և ի՞նչ կը խորհէր: Յիսուս թափանցեց, հասկցաւ փարիսեցիին միտքը, բայց իսկոյն զայն չյանդիմանեց, և անոր քարսիրտ և խիստ վերաբերմունքը չպախարակեց. որպէս զի իր խօսքերուն վրայ բոլորին ուշադրութիւնը դարձնէ, Սիմոնի հետեւեալ խօսքերը ըսաւ.

—Սիմոն, քեզի բան մ'ունիմ ըսելու:

—Ըսէ՛ վարդապետ, պատասխանեց նա փոքր ինչ ակնածութեամբ:

—Փոխատու մը երկու պարտապաններ ունէր, մէկը հինգ հարիւր դահկան պարտք ունէր և միւսը յիսուն. և որովհետեւ հատուցանելու կարողութիւն չունէին, երկուքին ալ շնորհեց. հիմա ըսէ՛ ինձի, անոնցմէ ո՞րը աւելի պիտի սիրէ զանիկա: ☐

Սիմոն սառնասրտութեամբ և իշխանուվայել ձայնով՝ առանց զգալու թէ այդ հարցը իրեն կը վերաբերի, ճիշտ այնպէս

ինչպէս վճարար Դաւիթ Նաթանի մէջ բերած առակին պատասխանած էր, ըսաւ .

— Ինձ այնպէս կը թուի թէ որուն որ շատ չնորհեց :

— Ուզի՞ր դատեցիր, ըսաւ Յիսուս .

Որքան որ Սիմոն ճիշդ պատասխան տուաւ Յիսուսի, այսու ամենայնիւ դեռ չէր կրցած հասկնալ թէ ի՞նչ բանի կ'ուզէր ակնարկել : Կինը՝ որ Քրիստոսի ոտքերուն փարած, միշտ կը համբուրէր անոր ոտքերն ու արցունքներովը կը թրջէր, թափթփած մազերով կը սրբէր և անուշ իւզովը կ'օծէր, կը հասկնար թէ Փրկիչը իրեն կ'ակնարկէր :

Յիսուս հոն բազմողներուն ու կեցողներուն ուշադրութիւնն հրաւիրող ձեւով մը, իր դէմքը այդ կնոջ դարձնելով՝ բարձր ձայնով Սիմոնի ըսաւ .

— Կը տեսնե՞ս այս կինը . ես քու տունդ մտայ, դուն ոտքերուս ջուր չտուիր, բայց ասիկա իր արցունքներովը ոտքերս թրջեց և իր մազերովը սրբեց . դուն ինձի համբոյր մը չտուիր, բայց ասիկա հոս մտնելէս ի վեր ոտքերս համբուրելէ չդադրեցաւ . դուն իմ գլուխս ձէթով չօծեցիր, բայց ասիկա իմ ոտքերս անուշահոտ իւզով օծեց . ասոր համար կ'ըսեմ քեզի . ներուած են անոր շատ մեղքերը, վասն զի շատ կը սիրէ . որով որ շատ կը ներուի շատ կը սիրէ, որով որ քիչ կը ներուի անիկա քիչ կը սիրէ :

Բարոյագիտութեան այս զարմանալի պատմութիւնը վերջացնելէ յետոյ, Յիսուս իր սրբազնասուրբ ձեռքը երկարելով կնոջ գլխուն վրայ սա կազդուրիչ, ու ողորմած խօսքերը ըսաւ .

— ԳՈՒ ՄԵՂՔԵՐԴ ԶԵՐՈՒՄԸ ԵՆ :

Մինչև այն ատեն ժողովուրդը զՅիսուս միտ մարգարէ և սքանչելի վարդապետ կը ճանչնար : Անոր գործունէութեան և վարդապետութեան համար շատ հիացմամբ կը խօսէին և կը գովէին . բայց չէին գիտեր և չէին լսած որ Յիսուս մեղքեր ներելու իշխանութիւն ալ ունէր : Այս պատճառաւ, հոն գտնուողներն իրենք իրենց ըսին .

— Ո՛վ է ասիկա որ մեզաց թողութիւն ալ կուտայ :

Յիսուս անոնց տարակուսանքն զգացած էր . ինչպէս իրենց դէմքի զարմացական երևույթէն ալ կը հասկցուէր . և որպէս զի բոլորովին փարատէ անոնց տարակոյսը, Աստուածային հեղինակութեամբն ու նուիրական մեծ վայելչութեամբն ըսաւ կնոջ . « Հաւատքդ քեզ փրկեց, գնա՛ խաղաղութեամբ : » Եւ առանց մի որեւիցէ կասկածի կինը գնաց խաղաղութեամբ, այն Աստուածային խաղաղութեամբ որ ամէն տեսակ խաղաղութենէ վեր է, որ երկինքէն կուգայ, որուն նման աշխարհ չէ կարող տալ խաղաղութիւն :

Կնոջ հաւատքը մեծ դեր խաղաց իր փրկութեան և ազատագրութեան մէջ, իր հաւատքովն էր որ մեզաց թողութիւն կրցաւ ընդունիլ . և ասոր համար իր սիրտը սիրով փարեցաւ Փրկչին . իր փրկութիւնն իր սիրոյն արդիւնքը չէր, այլ հաւատքին . հաւատքով միայն կրցաւ արդարանալ և երբ զգաց թէ արդարացաւ ու ազատագրուեցաւ, սիրեց և անչափ կերպով սիրեց զՅիսուս . ընական էր որ չէր կարող սիրել մինչև որ չհաւատար թէ սա իր Փրկիչն ու ազատարարն է :

Ո՛վ էր այս կինը, որուն Յիսուս ա՛յնքան աննախընթաց բարեացակամութեամբ և ողորմութեամբ վերաբերուեցաւ : Հին արեւմտեան Եկեղեցւոյ աւանդութեան համեմատ, այս կինը Մարիամ Մագթաղենացին էր, « ուրկի եօթր դու հանուած եր » :

Եթէ « եօթը դուեր հանել » բացատրութեամբ հասկնանք « ամէն ապականութենէ և մեղքէ ազատել », իսկոյն կրնանք հետեւեցնել թէ Սիմոնի տան մէջ երեցող այս կինը որ Յիսուսի ձեռամբ մեղքէ ազատուեցաւ, Ղուկասու Ը . 2 համարին մէջ յիշատակուած « Մարիամ Մագթաղենացին » էր « ուրկէ » Քրիստոս « եօթը դուեր հանած էր » : Թալմուտականները այս կնոջ կեանքին, հարստութեան, ճոխութեան, գեղեցկութեան, հմայիչ նայուածքին, ոլորած մազերուն համար շատ բաներ կը պատմեն . բայց Աւետարանէն յայտնի է որ անիկա ի վերջոյ անսահման անձնուէր և երախտագէտ կին մը եղաւ, և Փրկչին ծառայող և հետեւողներուն մէջ առաջնագոյն անձնուէր

կինը եղաւ : Դուկաս Աւետարանիչ Յիսուսի
հետեւող կանանց մէջ զանիկա միշտ ա-
ռաջինը կը յիշատակէ : Դուկաս Աւետա-
րանիչ չափ կարելի է որ Սիմոնի տունը
պատահած այս դէպքին պատմութեան մէջ
Մարիամու անունը չյիշատակեց, այն յար-
գելի պատճառաւ որ թերեւս ստուեր կը
ընէր նորա ի վերջոյ ստացած մաքուր և
ամբիժ կեանքին :

ԴԵԻՈՂԴ Մ. Վ. ԴՈՒՐԵԱՆ

Հեռուդոքիւն

ՅԱՐԲԱՐԻ «Յիսուսի կեանքին»

ՄՈՌՅՈՒԱԾ ԷՋԵՐ

Եկեղ. քարենորոգմանց հարցին մէջ՝ ընդհանուր
քաղաքական և ամենեւնի առաջ իր դերին ու
պատրաստութեանց գիտակցութեանը մէջ
քարճուցած ծեւնէլ հայ Եկեղեցականը : Եւ
Տաճարի այս քիւնդ իսկ Ամերիկահայոց
Հոգեւոր հովիւ Գեր. Տ. Պօղոս Վ. Գաթրան-
եան կը պահանջէ ամուսնացեալ եկեղեցա-
կանութեան ծալ իրեն արժանաւոր դիրք մը :
Ի դէպ եւ ուրեմն մէջ թերեւ ռուսահայ նշա-
նաւոր քանաստեղծին՝ Գաւառ Բարիպայի
(իկն ալ Բահանայի մը զաւակ) յուզիչ մեկ
հերքումով, որով իսկաւ պատկեր մը կը ձգէ
Բահանային, ինչպէս որ կ'ընթերցեն իկնը ա-
նոր պաշտօնը : Ո՛ր եր քի այդ վսեմ ըմբռ-
նումն ունենային մեր բոլոր Բահանայ եղ-
բայրներն ալ, իրենց նուիրական պաշտօնին
վրայ. ո՛ր եր քի՝ մանաւանդ՝ կրօնիկն հե-
ռացած եւ անոր սիրտիւնիկն զրկուած ժո-
ղովուրդը անդադարաւ իր սխալին վրայ,
պաշտելու համար իր Ս. նախնիներուն կրօնիչը
եւ յարգելու անոր անձնուէր պաշտօնեան :

ՔԱՆԱԿԱՆ

Այն ո՛վ ե կանգնած ամբիժնի վրայ,
Դողդոջուն ձեռներն երկիկն ամբարձած,
Դրքառաս աչերն յի արսասունիկն,
Բազմութեան ուշքը դէպի նա դարձած.
Որին ամենը ՀԱՅՐ՝ եւ անուանում,
Ծանօթ, անծանօթ՝ հաւասար յարգում,
Որի լոկ խօսքը օրենք եւ անգա,
Սրի գաղտնիքը նորան եւ յայտնում :

Բահանայ ե նա, Բառնող մեղներու,
Միջնորդ Աստուծոյ մարդկան ազգի հետ,
Հովիւ ե անխոնջ Բրիստաւի հօտին,
Երկնածիր զանձին նա ե արքուն դէս :

Երբ մենք քաքախուած Աղանայ մեղոք
Եկանք այս աշխարհ՝ յոցեալ ցաւերով,
Ո՛վ արեւը մաքրեց մեր հիւն մեղներով.
Ո՛վ մեզ սիրտիկն իւր սուրբ խօսքերով.
Կամ՝ երբ ժանճխած, ընկած մահնումը,
Մըտասանք, անյոյս մահ երկն խնդրում,
Պանդխտի նման ամենից բողբոջ,
Ո՛վ մեզ առաջին հաւաստ օգնութեան.
Կամ՝ երբ մոլորած զանկերու նման
Կոյր վազում երկն դէպի խորհրդաս՝
Ո՛վ արդեօք այն օր փրկեց մեզ մահից,
Դիւախան զրքեւ հանեց անարաս.
Կամ՝ երբ մեղսալիւր աչերս քընաւ
Չենք համարձակում երկիկն ամբարձալ,
Որին կանցում ենք միջնորդ հաշտութեան,
Ո՛ւնքով յոյս ունիկն բողբոջին ստանալ.
Եւ կամ՝ զբաղած ունայն գործերով,
Մոռցել ենք Աստուած, կրօն, սուրբ հաւաստ,
Ո՛վ ե մեր տեղը մեր մեղաց համար
Արսասունի քախում աչիկն յորդառաս :

Բահանա՛ն ե այն, եւ միշտ Բահանան,
Մեր միջնորդ, հովիւ Բառնող, եւ աղօթիչ,
Որքոց հայր, եղբայր աղիւս մոռացիկն,
Արսասունաց արքող, յանցանաց Բառնող :
Ե՛կ պատմեմք, եղբա՛րք, այդ սուրբ Բահա-
նան,

Սիրեմք միշտ նորան մանկական սիրով,
Որ ամբողջ գիշեր իւր որդոց վերայ
Պատրաստ ե հըսկել անկուն աչերով.
Նա բոլոր կեանքը զոհեց մեզ համար,
Չուրեց փառք, պատիւ, զքօտանք աշխարհի.
Բանց սուրբ Բահանան ել ո՛վ ե կարող
Արդեօք մեզ համար շինել հայր բարի :

Գ.Ս.ՄԱՆ.ՔԱՆԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԾԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊՈՒԷՏ Խ. ՄԻՍԱՔԵԱՆ

(Անտիպ էնթուսիստներու առթիւ)

Գ.

Միսաքեանի բնաւորութիւնը բուն է, խիզախ, ըմբոստ, մարդատեաց, և սակայն երբ քնարը կը թրթռացնէ մեռելներու, մանուկներու վրայ, փափուկ, հոգեթիւ, երկնաշունչ տրոփում մը կ'ունենայ: Օրորոցի մանուկին վրայ երգ մ'ունի, անոյշ, հրապուրիչ գգուտ ոճ մը կայ. թէև անարուեստ, անպաճոյճ, բայց սիրուն է այդ ոճը:

Կատակասէր է, կ'ըսես, երբ կարդաս «Հացկերոյթ»-ի ոտանաւորը:

Անհունօրէն սքանչացող մըն է Վենետիկի Միսթարեան միաբան Հ. Եղուարդ Հիւրմուզի, որուն համար կ'երգէ.

«Եւ ի Մասեաց Մուսայից
Ոչ ոք չաւ զսաւսն աղու
Քնարին արար դաշնակից:»

Իր անկեղծ հիացումը փոխանցած է նաև իր աշակերտաց:

Միսաքեանի գրագէտ աշակերտները՝ Վ. Թորգոման, Յ. Մրմըրեան և Մ. Կիւրճեան սքանչացումով կը խօսին Հ. Հիւրմուզեանի մասին. անոր համբաւի մագնիսացումը ստացած են իրենց վարպետէն:

Բանաստեղծը թէև երկաթի կամքի տէր է եղած, սակայն ունեցեր է վճատութեան ընկճուած վայրկեաններ. տխրունի ժամերուն երգած է.

«Այլ նշմարեմ մի միայն
Ձրասարկութիւնն ընդունայն,
Ձոր մահ պեղեաց աջաշուրջ
Ձինն զգամբ խնով շուրջ:»

Եւ բուռ պէս միմաւորիկ իր տխրութեան աւերակին մէջ կը մտնուի, կուլայ իր ծնողքը, կուլայ իր սէրը: Գերեզմանի մէջ գահավիժումի օրը միշտ իր աչաց առջևն ունի:

* * Խիզախ բնաւորութեան տէր մարդն էր Միսաքեան. անխտիր ամէն մարդ իր

քննադատութեան խարաղանէն չէր ազատեր: Պոլսեցի գիտուններուն համար կըսէր. «Ձե՛ն կարդար, կը գրեն. չգիտե՛ն, դաս կուտան... Գաղափար, պատմութիւն չունին, ծանծաղ ու թեթեւ մարդիկ են»: Ինքն իրեն նկարագրին ունէր, և այդ հոգեբանութիւնը դուռը բաց անէջ սահմանափակուած է. իր այդ նկարագրին հայելին է իր սա «Ձանձին անվեներութենէն» քերթուածը. —

«Ըզգըլիսիւ յառաջմէ արեցուքեամբ յաղորդեանս,

Որ ի ծոցոյ կաղամարին ինձ ժպտի:
Սով քանի, երկիւղ հոգւոյ յինեմ օտարի եմ, Թաղի,
Եւ որ կամիմ զիս յիս նշխուն սեսանել,
Գաղափարս Մեխայիկն ակըն կաշի 'նդ իսրայի:
Ես նշխուն ընկնեալ միայն յԱղարուքեանն երեսաց,
Եւ ուր ինձ ճշմարտութիւն դիմ յանդիման, երեւի,
Ծուռն անդեմ կրկնեմ նշմա խոնարհեալ:»

Միսաքեան իր դարու պոէտներու ճոռով ոճով վարակուած է. աննշան դէպք մը մէջտեղն է, և տհաւ ամբողջ տիեզերք կը դրդի. համայն բնութիւն, երկիր ու տարերք կը տխրին կամ կը խնդան ըստ քերթողին քնարին: Կ'ամուսնանայ Հիւրմուզեանի քերթողի օրդին. և ահա Միսաքեան որոտընդոտ քերթուած մը կը գրէ.

«Ընդ փեսաւեր որեւոյն
Եւ 'նդ հարսնածու մանկամարդացն պարուն,
Բերկրապասար հարե՛ք կայր,
Սասանեցի 'նդ ոսիւք մերովք սաճարդ այր,
Որպէս եսնէ կրակակոծ
Ի Կիկղապայոց յունադրդորդ հարուածոց... »:

Այսպէս կը գրէին և կը քերթէին իր ժամանակակից քերթողները և իր ընտանի վարպետ Միսթարեանները՝ Թովմաճանեան, Ջախջախեան, Բազրատունի և Հիւրմուզ:

Միսաքեան ընդհանրապէս ստորին անաղնիւ բացատրութիւններ գործածած է. քնարին ներդաշնակութեան մէջ այդ տրամաններ շատ խոշոր կ'երևին:

Միսաքեանի քերթողական կորովը մը չափուած չէ. իր բանաստեղծական հոգին սիրահարուած է յունական վարպետներուն:

Հոմերական գրականութիւնը հայկականին մէջ ուղած է ներմուծել. սակայն իրեն կը պակասի գրական ու գեղեցկագիտական ուժ:

Հրապուրիչ ըլլալու ճիգ մը չունի. սանկ արձակ գրելու դիւրութիւնը յայտնի է իր ամէն մէկ քերթուածներուն մէջ:

Լեզուն, հայկարանութիւնը, ձեւ ու գոյն ամբողջովին իր ժամանակի վանական քերթողներու ոճին լուսանկարներն են:

ԱՏԳՈՒՇԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ

(Շար. նախորդ թիւին)

Քարա-Մուրզա արտովին կը բաղձար իր քառաձայն Պատարագը Էջմիածնայ տաճարին մէջ հաստատել. ուստի երբ 1893ին Ախալքալաքի մէջ համերգներ կուտար, հոն ծանօթանալով Գէորգեան Ճեմարանի ուսուցիչ Ք. Յովհաննէսեանի, իր ցանկութիւնը յայտնեց. ուսուցիչը խոստացաւ որ Էջմիածին վերադառնալէ յետոյ՝ այս մասին բանակցի Ճեմարանի տեսուչ Սեդրաքեան Արիստակէս եպիսկոպոսի հետ. և յիշուի նոյն տարւոյ Սեպտ. ամսուն՝ Քրիստափոր հեռագիր մը կը ստանայ 1000 ռուբլի թղակաւ Էջմիածին երթալու: Յանչափս կ'ուրախանայ Քարա-Մուրզա, և ամէն բան թողլով ո'ւղղակի կ'աճապարէ վաղարշապատ, իր բոլոր ընկերներովն ու աշակերտներով:

Տ. Մկրտիչ Ա. Խրիմեան կաթողիկոս տակաւին նոր հաստատուած էր Էջմիածնայ հայրապետական Աթոռին վրայ, և Պոլսոյ մէջ արդէն ծանօթացած ըլլալով մեծանուն երաժշտապետին հետ՝ սիրալիր ընդունելութիւն մը ըրաւ անոր, որմէ քաջալերեալ Քարա-Մուրզա սկսաւ իւր բոլոր ճիգը թափել քառաձայնի կատարեալ երգչախումբ մը հասցնելու համար, և իր կարճատեւ պաշտօնավարութեան միջոցին կարող եղաւ վարժեցնել յաջողակ երգչական խումբ մը, որով սկսաւ առաջին անգամ մուտ

գտնել քառաձայնը Ս. Էջմիածնայ տաճարին մէջ:

Մեր մէջ գրեթէ երբէ'ք պատահած չէ գովելի ձեռնարկ մը որ իր թշնամիներն ունեցած չըլլայ՝ այսպէս ալ, թէև ի սկզբան մեծ ընդունելութեան արժանացաւ Քարա-Մուրզայի հեղինակած քառաձայն Պատարագը, բայց հետզհետէ սկսան դժգոհութեան ձայներ բարձրանալ ամէն կողմէ՝ առաքելով թէ «Եկեղեցին սրբալայր մըն է, և ո'չ թատրոն. անոր հեղինակը թող երթայ իր հռոմէադաւան ընկերներուն մէջ տարածէ այդ դրութիւնը. մեզ պէտք չէ'ն այնպիսի նորելուկ սովորութիւններ»:

Այս թշնամական ցոյցերէն կարեւոր խոցուեցաւ Քարա-Մուրզա, և իր ջերմ պաշտպանն եղող Արիստակէս Եպ. Սեդրաքեանն ալ հեռացած ըլլալով Էջմիածնէ, պարտաւորեցաւ մեկնիլ Տփլիս, ուր քանի մը տարի ապրելէ յետոյ մեռաւ 1902 Մարտ 27ին, թողլով կին մը և անչափահաս դուստրներ:

Այս աշակերտներէն Յովհ. Կորապետեան կը պատմէ թէ՝ հանգուցեալը 1885 թուականէն մինչև իր մահը 90 խումբ կազմակերպած է Ռուսիոյ և Կովկասի դահադան քաղաքներուն մէջ. 243 նուագահանդէսներ տուած է, որոց մասնակցած են 6000 հոգի՝ արական և իգական սեռէ. 67 ինքնուրոյն հեղինակութիւններ և 320 մշակած երգեր գրած է. իր գործունէութեան մասին ներբողալից գովեստներ ըրած են 40է աւելի Ռուս, Վրացի և Հայ թերթեր. նորա շնորհիւ շատեր երաժշտական բարձրագոյն կրթութիւն ստացած են, որոնցմէ յիշատակութեան արժանի են Ներսէս Շահլամեան և Լեւոն Պօղոսեան. 47 հայաբնակ քաղաքներու մէջ ծառայած, և նոցա բնակչութեան մեծագոյն մասին ծանօթացած է. վերջապէս մինչև իր մահուան օրը նա զբաղած է նորանոր խումբեր պատրաստելու, մինչև որ զոհ գնաց իր մարմնացեալ եռանդին:

Քարա-Մուրզայի մեկնումէն վերջը Էջմիածնայ տաճարին մէջ թէև պահ մը դադարեցաւ քաղմաձայն պատարագի երգեցողութիւնը, բայց Նիկողոս Թաշճեանի ա-

ռաջնակարգ աշակերտներէն Մակար Եկմալեան (ծնեալ 1856) լաւատեղեակ ըլլալով հայկական ու եւրոպական երաժշտութեան, սկսաւ ինքը վարել այն երգեցիկ խումբը, որ ըստ բաւականին մարդուած էր Քարա-Մուրզայէ։ Սա՝ որ գործօն դեր մը ունեցած էր ձայնագրեալ Շարականաց տպագրութեան մէջ, հեղինակեց նաեւ երկ-ձայն և միաձայն Ս. Պատարագի արարողութիւնները, որոնք տպագրուելով էջմիածնայ մէջ, մեծ ընդունելութեան արժանացան։

Եկմալեան միջին ճամբայ մը ընտրած էր իրեն, ըստ որում ո՛չ Քարա-Մուրզայի պէս բազմաձայնին և ո՛չ ալ միօրինակ միաձայնին հետեւեցաւ, այլ Նիկողոս Թաշճեանի երկձայնին փոքր ինչ բարեփոխեալն հեղինակեց, որով ամէն ականջի ալ ախորժալուր հնչեց իր երկասիրութիւնը. այս պատճառաւ շատեր մայրաքաղաքիս մէջ ալ իր դրութեան հետեւեցան, ինչպէս նաեւ Գրիգոր Մէհտէրեան՝ որ ուրոյն հեղինակութիւն մը ընելու կարողութիւնն ունենալով հանդերձ, նախամեծար համարեց Մակար Եկմալեանի պարզ դրութեան հետեւող ըլլալ։

Այս միջոցներուն նշանաւոր հանդիսացած էր Քարա-Մուրզայի առաջնակարգ աշակերտներէն Ներսէս Շահլամեան, որ բնութենէն օժտուած ըլլալով թէնօտի զօրաւոր ձայնով, մինչեւ Ռուսիոյ կայսերական թատրոնին մէջ կրցաւ մուտ գտնել իր ուժեղ ձայնին շնորհիւ, և այդ խումբին մէջ ամենէն դժուար կտորներն սկսաւ երգել իբր մասնագէտ։

Դժբախտաբար խիստ կարճատեւ կեանք մը ունեցաւ ան, վստն զի մտային հիւանդութեան մը ենթակայ ըլլալով՝ եղբրական մահուամբ մը վերջացաւ այս անուանի գուսաներգակին կեանքը, գողցես ճակատագրային վճռով մը հետեւելով իւր նախորդներուն՝ Քրիստափոր Քարա-Մուրզայի և Մակար Եկմալեանի, որոնք իրեն պէս երիտասարդ հասակի մէջ մեռան (1902)։ այդ պատճառաւ մեր ազգը չկրցաւ երկարատեւն օգտուիլ այս ասուպի նման անհետացող փայլուն տաղանդներէն, որոնք

խիստ սակաւատեւ գոյութիւն մը ունեցան Ռուսահայոց մէջ։

Այն ամէն վաղանցուկ փառքերէն յետոյ՝ եթէ մեզ միակ միութարութիւն մը կը մնայ, այն ալ մեր ժամանակակից Կոմիտաս վարդապետն է, (ծնեալ ի Կուտինա 1869 Սեպտ, 26ին՝ Սողոմոն անուամբ), որուն հռչակը տարածուեցաւ Եւրոպայի խորերը՝ Պէրլինի և Բարիզու քօնսէրվաթուառի մէջ կատարած լուրջուսումնասիրութիւններովը, և տուած համերգներովը ի ծուրիս, ի Պէրն, ի Լոզան, ի Փրնէպ և ի Վենետիկ. (Ինքնակենսագրութիւն, 1910 Ամենուն Տարեցոյցը)։

1896ին Ռուսահայ բարերար Աղեքսանդր Մանթաշեանի ծախիւք Պերլինի երաժշտական բարձրագոյն վարժարանը մտած ըլլալով, անուանի ջութակահար է. Եօաքիմի յանձնարարութեամբ աշակերտեցաւ Ռիչարտ Շմիթի՝ մինչեւ 1899, որմէ յետոյ վերադառնալով ի Ս. էջմիածին, ստանձնեց Մայր Աթոռոյ դպրապետութեան, ինչպէս նաեւ Դէորգեան ճեմարանի երաժշտութեան դասախօսի պաշտօնը։

Մեր նպատակէն դուրս է կենդանի հեղինակաց վրայ երկարօրէն խօսիլ, ուստի այսքան թեթեւ ծանօթութիւն մը բաւ համարելով, շատերու հետ մենք ալ անհամբերութեամբ կը սպասենք՝ ժամ առաջ տեսնել Նորին Գերապատուութեան հրատարակելիք տեսութիւնները Շարականաց հին խազերու մասին, այն յուսով որ մինչեւ ցարդ մեր մտքին վրայ տիրապետող խաւարը փարատելով, թերեւս լուսաւորուինք իր գործերէն։

* * Տիգրան Չուհաճեան այլեւս վհատած՝ իւր նոր երկասիրութիւնն եղող Զեմիրե օթէւթը Բարիզու թատերաբեմերէն մէկուն վրայ ներկայացնելու անյաջող փորձերէն, մեկուսացած կեանք մը կը վարէր Զմիւռնիոյ մէկ անկիւնը, դառնութեամբ բաղդատելով իր փառաւոր անցեալը ներկայ անշուք կենցաղին հետ. կը յիշէր իր երբեմնի գտած ընդունելութիւնը, ի Բարիզ, յԵգիպտոս և ի Պոլիս, ներկայացնելով իր հեղինակած գուսաներգութիւնները, որոնց համար իրաւամբ յորջորջուած էր «Հայ Վէրտի»։

Զմիւռնիոյ մէջ վերջացաւ բազմալատակ երգահան Տիգրան Զուհանեանի կեանքը 1898 Մարտ 10ին: Տարօրինակ հակասութեամբ մը, այն որ 40 տարիներ ճոխ կեանքի մը մէջ անընդհատ ծախահարուելով, վերջերս ալ թշուառութեան եւ մոռացութեան դատապարտուած էր Իզմիրի մէկ խորշին մէջ, փառաւոր յուզարկաւորութիւն մը ունեցաւ: Իր դադաղին տուէնէն գացող նուագախումբը մեծանուն հանգուցեալին պատրաստած «Մառչ Ֆիւնէպրը» նուագեց, զոր Զուհանեան հեղինակած էր՝ յատկապէս իր մահուան օրը երգուելու համար:

Դժբախտաբար այս եղած է եւ պիտի ըլլայ մեր Ազգին բոլոր վտտակաւորներուն վախճանը. «Գնա մեռիր, եկու սիրեմ»-ի դրութիւնը յաւիտեանս պիտի յաւատեւէ մեր մէջ:

Մեծանուն երգահանին համակրողներէն Յարութիւն Սիւննեան եւ Սմբատ Քէսէճեան՝ անոր «Օլիմբիա»-ն հրատարակելով ի վաճառ հանեցին, որոյ հասոյթով իր հարձանք կանգնեցին Իզմիրի մէջ:

Հանգուցելոյն բազմաթիւ աշակերտաց մէջ յիշատակութեան արժանի է Լեւոն Զիլինկիրեան, որ թէ ի Զմիւռնիա եւ թէ ի Պոլիս աշխատեցաւ եռաձայնի դրութիւնը տարածել եկեղեցեաց մէջ:

* Զուհանեանէ տարի մը առաջ (1897) մեռաւ նաեւ Յովհաննէս Սճէմեան, որ այնքան բուռն պայքարներ մղեց Հայ ձայնագրութեան դէմ՝ իւր տուած յօդուածներովն Արեւելիի եւ Զերիսի մէջ:

ԱՐԻՍՏԱԿԵՍ ՔԼ. ՇԻՍԱՐԵԱՆ

(Վերջը յաջորդով)

«ՏԱՃԱՐ»-Ի ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հանի Հապիպի, Վ. Վ.—«Տաճար»-ի վարչական եւ խմբագրական գործերը այնքան կ'զբաղեցնեն զմեզ, որ շատ դժուար — երբ ոչ անկարելի — կ'ըլլայ անկէ դուրս եղած յանձնարարութիւններ կատարել: Հետեւապէս ներողութիւն կը խնդրենք մեր յանձնարարութիւնը գործադրելու միջոց չունենալնու համար: Նոյնը միակզմընդ միջոց կը յայտարարենք ուրիշ բազմաթիւ նախագիծերու: — Ուզուած երկու հիւն թիւերը յրկած եմք:

ՀԱՅԿ. ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

ԱԿՆԱՐԿ ՄԸ

ՏՍՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԻՆ ՎՐԱՅ

(1909—1910)

Այս շարթու ստացանք 200 ստուար էջերէ բաղկացած հատոր մը, տարեկան տեղեկագիրը այս ճշմարտապէս բարեգործական Միութեան վարչական Ժողովի միամեայ գործունէութեան (1909—1910), որ կարգացուած է 1910 մայիս 8ին ի Փահիրէ գումարուած Ընդհ. Ժողովին մէջ, եւ անպայման հաւանութիւն եւ գնահատութիւն գտած:

Տեղեկագիրը կը սկսի անցեալ տարուան եռամեայ տեղեկագրի վերջաբանին յիշատակութեամբ, որով յոյս կը յայտնուէր թէ «իւր սկզբնաւորութեան մէջ այդ համեստ ձեռնարկը մերձաւոր ապագայի մէջ պիտի ըլլայ օգտակար օրկան մը՝ Հայութեան պահպանումին եւ բարգաւաճումին նուիրուած»: Այդ յոյսը, կրնանք ըսել թէ իրականացուած է այսօր: Հին ունեւորի սկզբնականները, Թուրքիայ մէջ սահմանադրութեան հաստատուելովը, ջնջուած եւ ընկերութեան «գաղափարատարածութեան գլխաւոր խոչընդոտները մասամբ վերցուած ըլլալով», Միութիւնը կրցած է աշխատիլ իր բարգաւաճման, առանց վարանումի եւ առանց վերապահութեան: Այս նպատակով, Միութեան եռամեայ տեղեկագիրը, ինչպէս նաեւ բարեփոխուած կանոնագիրը, հայերէն եւ ֆրանսերէն լեզուով տպագրութեան հազարներով ցրուած են գլխաւորաբար ազգ. թերթերուն, առաջնորդներուն եւ ծանօթ անձնաւորութեանց, որ կրցան միոճայնօրէն գնահատել տալ անոր անվիճելի կերպով օգտաշատ նպատակը: Սկսելով Ամենայն Հայոց Հայրապետ Վեհ. Տ. Տ. Մատթէոս Բ. Ս. Կաթողիկոսէն, Կ. Պոլսոյ Ամեն. Տ. Եղիշէ Ս.

Պատրիարքէն և Կիլիկիոյ Շնորհադարձ. Ս. Սահակ Ս. Կաթողիկոսէն, համակրութեան և շնորհակալութեան գրաւոր արտայայտութիւններ եղած են Կիլիկիոյ և Թուրքիոյ միւս թեմերու գրէթէ բոլոր առաջնորդներէն և տեղապահներէն, որոնցմէ մեծ մասը նախաձեռնութիւն ունեցած են իրենց Վիճակներուն մէջ մասնաճիւղեր հաստատելու նոյն օգտաշատ Միութեան: Ազգ. Մամուլն ալ արդար գնահատութիւն մ'ըրաւ կատարուած ազնիւ գործին, զոր ծանօթացնելու համար լայնօրէն բացաւ իր էջերը: Գործնական համակրութիւն ցուցուած է մասնաւորապէս Ամերիկայի պատուական հայ գաղութին կողմէ, ուր հաստատուած մասնաճիւղերու զբաղման կարեւոր աջակցութենէն զատ, հրապարակային ժողովներով շնորհակալութեան ուղերձներ քուէարկուած են Նիւ-Եորքի, Պոսդոնի և Ուսգերի մէջ: Ի Պոսդոն 1909 Հոկտեմբերէն ի վեր կը հրատարակուի «Հայ» ամսուով ամսաթերթ մը, որ ընդհ. գաղափար մը կուտայ Միութեան գործունէութեանց և մասնաւորապէս Ամերիկայի մէջ անոր ծաւալման վրայ:

Եւ առանց պատճառի չէր որ համակրութեան հոսանք մը դէպ ի Միութիւնը՝ լայնօրէն տաքածուեցաւ ի Եփեսոս աշխարհի, ամէն ուր որ Հայութիւնը ունի իր ներկայացուցիչները՝ առաւել կամ նուազ բազմաթիւ: 1906ին կազմուած այս Մարմինը՝ Կիլիկիոյ ահաւոր կոտորածին վաղորդային իսկ աղէտեալներուն անմիջական կերպով հասցուցած առատ նպաստներովը ցուցուց թէ ո՛ր աստիճան բարեբար դեր մը ունի կատարելու այս տուտապեալ աղբին մէջ: Այդ նպաստները փութացուած են Ալպիսթան, Ատանա, Ջէյթուն, Հալէպ, Բիւլիս, Հաճըն, Մարաշ, Չորք-Մարզուան, Սըլազ, Ուրֆա, Ակն, Արաբկիր, Երզնկա, Եօզկատ, Կիւրին, Մուշ, Չմէկաձագ, Վան, Տիւրիկ, Պոլիս ևն., յատկացուելու համար կարօտեալներու, զիւղական տուներու շինութեան, վարժարաններու նպաստի, կարօտ հողագործներու, բարենպատակ ընկերութեանց (ինչպէս Միացեալ Էնկերութիւն, Ազգանուէր Հայուհեաց, Դպրոցասէր Տիկնանց) ևն.:

Այս նպաստներու բարւոք գործածութիւնը կը ստուգուի կանոնաւոր usացազիրներով, բաշխման մանրամասն ցուցակներով եւ այլ հաստատական վաւերագիրներով, որոնք նպաստընկալ մարմիններէն յիշադր կը պահանջուին: Եւ այդ նպաստները կը բաշխուին, Միութեան կողմէ միասին զբաղուած բացառաջ հրահանգներու համաձայն: Տեղեկագիրը կը յայտարարէ նաև որ եթէ միջոցները ներելու ըլլան, պէ՛տ էրա՛մ հակաշիրտ սեղոյն վրայ եւս պիտի գործադրուի, նպաստներու առաքումէն առաջ եւ յետոյ, յաճուի ֆնիլցներու եւ քրիստոնէական միջոցաւ:

Տեղեկագիրն մէջ ժամրամասնօրէն կը յիշատակուին, կանխորոշ նպատակով եղած նուիրատուութեանց զլիւն տակ, հնազանդ Տիգրան խան Բէլէկեանի 1000 ոսկիի նուէրը Կիլիկիոյ մէջ որբանոցի մը կառուցման համար, Դահիրէի Միացեալ որբանոցի ընկերութեան ամէն տարի տալիք թատերական ներկայացման զուտ հասոյթը՝ պայմանաւ որ Միութիւնն ստանձնէ նոյն որբանոցին պաշտպանութեան տակ գտնուած որբերուն հոգը, (այս տարուան ներկայացման զուտ հասոյթն է մօտ 299 Եգիպտ. ոսկի), Մանչէսթրի Հայ Տիկնանց Միութեան զրկած 80 Անգլ. ոսկիի գումարը սգաւոր այրիներուն և որբերուն անմիջական պէտքերուն գործածուելու համար, Վան. Յովհ. Էֆ. Ալլահվէրտի 400 Անգլ. ոսկի նուիրատուութիւնը, նաև Սր. Աննա Չամիչի 400 ոսկիի նուիրատուութիւնը՝ յանուն և ի յիշատակ իր ողբացեալ եղբոր՝ Արթին Էֆ. Չամիչի:

Վերջին երկու նուիրատուութիւնք հաշուեցուցակին մէջ անցած չեն, տարեշրջանի փակումէն ետքը զրկուած ըլլալուն համար:

Ատոնցմէ զատ, Պոսդոնի Ազգ. Երազրին և Դահիրէի, Ազգ. Երանդրիոյ, և Ֆրեզնոյի Եղեմ գիւղի հայ գաղութին հանգանակութիւններէն գոյացած է 8065 Եգիպտ. դշ. ի գումար մը, որ աւելցուելով Մանչէսթրի Հայ Տիկնանց Միութեան նուէրին վրայ՝ 7800 Եգիպտ. դրշ., համագումար 15,865 Եգիպտական դրշ. զրկուած է Հաճըն, Ան-

տիւք, Մարաշ, որսերու, աղէտեալներու, և հիմնելի կանանց աշխատանքի Տան ի նպաստ:

Կտակներու գլխուն մէջ կը տեսնենք Զակաղիկ հաստատուած հանգ. Գր. Մէօթէմէտեանի կտակը՝ Մէհտիյէ գիւղը ունեցած մշակելի երեք կտոր հողեր, աւելի քան 21 ֆէտտան տարածութեամբ և իրր 300,000 եգիպտ. զրշ. արժէքով, որոց սեփականութիւնը Միութեան կը փոխանցուի, պայմանաւ որ անոր հասոյթներովը կտակարարին ծննդավայր քաղաքին՝ Թօգատի մէջ վարժարանի շէնք մը կառուցանէ և վարէ նոյն վարժարանը՝ կտակուած հողին տարեկան եկամուտովը: Նոյն գլխուն մէջ շնորհակալութեամբ կը յիշուի նաև Կ. Պոլսոյ Հանէսեան Տան պաշտօնեայ Մկրտիչ էֆ. Վարդանեանի 100 Օսմ. ոսկիի կեանքի ապահովագրութիւնը, մահուան պարագային անդամունալի կերպով Միութեան վճարուելու պայմանով:

Առանց կանխորոշ նպատակի, այս չրջանին Միութեան եղած նուիրատուութիւններու գումարը կը հասնի եգիպտ. 8779 զրշ. եւ ատկէ զատ բայառիկ հանգանակութիւնները որ սկսած էին Կիլիկիոյ աղետալի կոտորածին դժբախտ զոհերուն օգնութիւն փութացնելու համար, չարուանակուած են այս չրջանին մէջ եւ, և գրամական առատ նուէրներէ զատ հաւաքուած են աւելի քան 500 ոսկի արժողութեամբ հագումներ: Աղեքսանդրիոյ տիկնանց մասնախումբին անդամունիք որոնցմէ շատեր կը պատկանին հայ գաղութին առաջնակարգ ընտանիքներուն, իրենց ձեռքով կարեցին 2000 որբի համար հագուստ եւ:

Այդ միահամուռ ջանքերու և օժանդակութեան հետեւանօք, Միութիւնը կարող եղաւ 1909 Ապրիլի ցաւալի դէպքերուն հետեւեալ օրէն իսկ Կիլիկիոյ աղէտեալներուն հասցնել 539,879 եգիպտ. զրշ. ի կարեւոր դումար մը, որու մէջ է 1909 Յունվարէն Մարտ՝ Փոքր Ասիոյ սովեալներուն զրկուած 77,452 եգիպտ. զրշ. ը:

Վերջապէս, Միութիւնը իր հիմնարկութենէն ցայսօր, իբրեւ նպաստ և օժանդակութիւն կարող եղած է բաշխել 1 միլիոն

418,681 եգիպտ. զրշ., այսինքն աւելի քան 16,000 օսմ. ոսկի:

Հաշիւներու ընդհ. ամփոփումին վրայ ակնարկ մը նետելով, կը տեսնուի թէ վերջացող տարեշրջանին հիմնական և արտակարգ եկամուտներու նպաստի յատկացուելիք մասն եղած է 799,694 եգիպտ. զրշ., որուն վրայ աւելցուելով նախորդ տարուան մնացորդը՝ 77,927 եգիպտ. զրշ., գումարն եղած է 877,621 եգիպտ. զրշ.: Այս գումարէն տարւոյս ընթացքին մէջ բաշխուած նպաստի համագումարն է 788 հազար 376 եգիպտ. զրշ., ընդհ. ծախքերու գացած է 33,905 եգիպտ. զրշ. և կը մնայ 55,339 եգիպտ. զրշ. սկող տարեշրջանին ի նպաստ:

Իսկ հիմնական դրամագլուխին վրայ այս տարի աւելցած է 129,712 եգիպտ. զրշ. որ զոյացած է մուտքի տուրքէ, անդամավճարներու 1/6 էն, և նուիրատուութիւններէ: Այնպէս որ 1910 Ապրիլ 30ին հիմնական դրամագլուխի հաշիւին համագումարը հասած է 1,001,518 եգիպտ. զրշ.:

Միութիւնը որ 1909 Ապրիլ 30ին ունէր միայն երեք մասնաժողով, (Աղեքսանդրիա, Մանչեսթըր և Պոսդոն), այժմ ունի մասնաժողովներ եգիպտոսի և Եւրոպայի ու Ամերիկայի այն բոլոր գլխաւոր քաղաքներուն մէջ ուր բաւական ստուարութիւն հայ գաղութներ կը գտնուին, նաև Թուրքիոյ գլխաւոր քաղաքներու մեծամասնութեան մէջ(*), և ես քան զեւ ընդարձակելու վրայ է իր օգտաշատ գործունէութեան չրջանա-

(*) Միութեան անդամաց տեղեկագրին կցուած ցուցակէն կը տեսնուի թէ Ապրիլ 30ին ընդհ. անդամներուն համագումարն էր 2643, Գահիրէի կեդրոնին ու եգիպտոսի միւս քաղաքներուն և Թուրքիոյ ու արտասահմանի բոլոր մասնաճիւղերուն մէջ: Իրենց մեծագումար նուիրատուութիւններով Միութեան ԲԱՐԵՐԱՐ ԱՆԴԱՄ հոշակուած են Վսեմ. Պօղոս փաշա Նուպար, Վսեմ. Արտահամ փաշա Բարբոզ, Վսեմ. Տիգրան խան Քեչեկեան և հանգ. Տիար Գրիգոր Մեօթեմէտեան: Իսկ ՊԱՏՈՒՅՑ ԱՆԴԱՄ հոշակուած են Վսեմ. Եագուպ Արթին փաշա, Տիկ. Պօղոս փաշա Նուպար, Տիկ. Նոյեմի Գաբամանեան, Տիար Լեւոն պէյ Յակոբեան, Օր. Աննա Զաւիյ, Վսեմ. Յովհաննէս Կֆ. Ալլահվերտի:

կը, աջակից ունենալով ազգին ջերմ ու գործնական համակրութիւնը, որ հետզհետէ աւելի ևս պիտի տարածուի, առաւել ևս համոզում գոյացուելով Միութեան ուղղամիտ և ճշմարտապէս ազգասէր գործունէութեան վրայ: Ատոր ցոլացումն է ներկայ տեղեկագիրը, ուր կ'երևան Միութեան բոլոր եկամուտներն ու ծախքերը՝ իրենց բոլոր մանրամասնութեամբ ժողովուրդին պարզելով թէ որչափ իրզմտութեամբ և գիտակից ոգով կը գործածուին իր տուած դրամները, յատկացուելով ճիշդ այն նպատակին որուն համար նուիրուած են:

Համարատուութեան այս պայծառ եղանակը՝ որ մեր ազգին հասարակայնն շատ քիչ մարմիններու քով կ'երեւայ դժբախտաբար, Բարեգործական Ընդհ. Միութեան փառքուն յաջողութեան ամենամեծ աղբակը կը կազմէ, այդ յաջողութեան հիմնական շարժառիթն ըլլալով Միութեան՝ ու է քաղաքական հանգամանքէ զերծ՝ էապէս մարդասիրական նպատակը, այն է.

Ա. Ասիարեակ հայ ժողովուրդին մտաւոր և բարոյական զարգացման նպատակը.

Բ. Անոր նիւթական և սնտեսական կացութիւնը բարւոքելու աշխատել, և

Գ. Այս արդիւնքը յառաջ բերելու ծառայող ու է ձեռնարկ կամ հրատարակութիւն քաջալերել:

Միութեան կանոնադրին Ա. յօդուածին վերոգրեալ մէջբերումէն ետքը, անհրաժեշտ կը համարինք նոյնութեամբ արտատպել տեղեկագրին հետեւեալ ուշադրաւ հատուածը, որ կը պարզէ ազնիւ ու ողջամիտ ոգին որով կազմուած է ու կը գործէ այն տիպար Մարմինը.

«Կը սիրենք յուսալ որ սահմանադրական ռէժիմը, որուն բարեբար արդիւնքները օսմանեան հայրենիքին մէջ հետզհետէ կը տեսնուին, պիտի ունենայ հարկաւոր հեղինակութիւնը միանգամ ընդ միշտ վերջ մը ղնելու համար անհետացող ռէժիմին տխուր ժառանգութիւնը եղող ցուալի դէպքերուն, եւ թէ՛ ինչպէս անցեալին մէջ՝ մենք պիտի չունենանք աղէտեայնեբոլ կամ սովեալներու նիւթական պէտքերուն գոհացում տալու միակ մտահոգութիւնը որ կը սպառէր մեր բոլոր ուժերը. բայց թէ, հաւատարիմ մեր ձեռնարկին առաջադրած գլխաւոր նպատակին, մեր մտածման առարկան պիտի ընենք՝ մեր ժողովուրդին յետա-

մնաց դասակարգներուն գործնական դաստիարակութիւն մը տալ, արդիւնաբերութեան նորանոր աղբիւրներ ստեղծել, հողագործութեան արդիական գիտելիքներուն ընտելացնել, եւ ասոնց գործնականին մէջ կիրարկուելը հնարաւոր ընել՝ հայկայնութեամբ գործիքներ, արջառ եւ սերմնացու, անոնց գործ գտնել, արհեստանոցներ եւ արհեստի զըպրոցներ տրամադրել, իրենց առողջապահական վայմանները բարեփոխել, եւ մէկ խօսքով՝ իրենց ընկերային վիճակը բարւոքել:

Վերջին տարուան միջոցին, պարտաւորութեանք աւելի աղքատախնամի մը ապերախտ դերին մէջ սահմանափակուել, եւ մեր բոլոր ջանքերը ու օգնութիւնները զոհեցինք՝ Կիլիկիոյ հազարաւոր աղէտեալներուն եւ Անատոլիոյ ուրիշ զաւառներու բազմաթիւ կարօտեալներուն աղիւսը թշուառութիւնը ամօրեղու. սակայն եւ այնպէս մեր գործը տարբեր պաշտօն մը ունի կատարելիք, տարբեր է անոր կոչումը:

Անոնք որ մօտէն կը հետեւին Ալիանս Իզրայէլիի յառաջդիմութեանը, զիտեն արդէն այն գեղեցիկ դերը զոր ազգասիրական այս հրաշալի ընկերակցութիւնը կը կատարէ ամբողջ աշխարհի մէջ: Անիկա Հրեաներուն համար նախախնամութիւն մը եղաւ, այս աշխատասէր ժողովուրդին համար, որ Հայերուն պէս ցրուած է եւ անոնց չափ հալածուած: Արդ, Ալիանս Իզրայէլիի իր ահագին յաջողութիւնը կը պարտի խիստ ողջամիտ ըմբռնումի մը, կատարելապէս գործնական դաւանանքի մը. առանց սնուցանելու քաղաքական փութ ցանկութիւններ որ պոտիկ ժողովուրդներու ուժերը կը հատցնեն, Հրեաները կ'աշխատին, սրանչիլի կերպով յարմարցուած համերաշխութեամբ մը, իրենց բարոյական եւ տնտեսական վիճակին դանդաղ բայց ապահով բարեխառումին:

Միութիւնը, իր նպատակով իսկ, կոչուած է կատարելու միեւնոյն դերը. որովհետեւ տարակոյս չիկայ որ Հայերը՝ աւելի քան ուրիշ ու է ժողովուրդ՝ պէտք ունին ամփոփուելու եւ բարգաւաճելու, կրթութեամբ եւ աշխատութեամբ: Կը մտադենք ուրեմն սրտագին որ այս նոր փութին մէջ՝ ուր հայ ազգը կը մտնէ Թուրքիոյ մէջ, մեր ընկերութիւնը այլեւս ուրիշ հոգ չունենայ՝ բայց եթէ այս ուղղութեամբ կատարել իր պաշտօնը, ինչպէս որ իր հիմնարկութեան առաջին օրէն նախագծած է արդէն:

Միեւնոյն սրտագին մաղթանքով կը փակենք համառօտ ամփոփումը սոցն տեղեկագրին, որուն կցուած է Միութեան կանոնագիրը՝ Ընդհ. Ժողովի վերջին նիստերուն մէջ ընդունուած բարեփոխումներով, և որուն մէջ կ'երեւան Ամենայն Հայոց հանգուցեալ Կաթողիկոս Խրիմեան Հայրիկի Կոնգրակը՝ զրուած 1906 Յուլիս 7ին, Միութեան հաստատման ամբիւր, նաեւ Ն. Ս.

Օծուծիւն վեհ. Տ. Տ. Մատթէոս Ս. Կաթողիկոսին, և Ամեն. Տ. Եղիշէ Ս. Պատրիարք Հօր Կոնդակները, և քաղուածներ՝ Կիլիկիոյ Շնորհազարդ Տ. Սահակ Ս. Կաթողիկոսի, և ուրիշ հեղինակաւոր եկեղեցականներու նամակներէն, ինչպէս նաև աոյն ազգանուէր Միութեան գործունէութեան վրայ ընդհ. հայ Մամուլին մէջ եղած հրատարակութիւններէն: Հրատարակուած են նաև Միութեան քառամսայ տարեգարծին առթիւ կատարուած հանդէսի միջոցին Միութեան նախաձեռնակ վսեմ. Պօղոս փաշա Նուպարի կողմէ արտասանուած ուշագրաւ բանաստեղծութիւնը, և քաղուածներ՝ ուրիշ բանաստեղծներու (Ե. Սղաթօն պէյ, Վ. Մալէզեան էֆ., Տ. Մուշեղ Եպ., Մ. Տամատեան) խօսածներէն:

Կը մնայ մեզ՝ երոխտագիտական ղգացումներով զեղուն, սրտագին շնորհակալութիւն յայտնել Միութեան հիմնադիր վսեմ. Պօղոս փաշա Նուպարի, և իրեն ոչ նուազ եռանդուն ու աշխուստ գործակիցներուն՝ պատուական անդամոց Կեդր. Վարչ. Ժողովին և միւս բոլոր մասնաճիւղերուն:

ԶԱՐՄԱՅՐ ԲԱՆԱՆԱԾ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Անցեալ Դ. ի ցաւալի ղէպքը զոր երկու տողով ծանուցած էինք նախորդ թուով մի ոմն դերասան Ենովք Շահէնի գաւազանի հարուածը՝ Ազգ. Վարչութեան ատենապետ Տ. ք. Սեդրոսեան էֆ. ի գլխուն, շատ աւելի մեծ հետեւանքը ունեցաւ քան որքան կ'արժէր այդ ապիրատ արարքը: Վերաւորեալին արիւնջուայ վիճակէն յուզուած, բոլոր ժողովականք պահանջեցին որ օրինական միջոցի դիմուի. բայց Ս. Պատրիարքը մերժեց բացարձակապէս, պատասխանելով թէ քանի որ ազգային իշխանութիւն չէ մնացած, Պատրիարքով և Ժողովներով պէտք է հրաժարին, և թէ ինք այլևս չի կրնար պաշտօնին պատասխանատուութիւնն ստանձնել: Ժողովականաց բոլոր դիտողութիւնները՝ Ազգ. Իշխանութեան հեղինակութիւնը ի հարկին օրինական ուժով յարգել տալու ստիպողականութեան մասին, չկրցան համոզել Ս. Պատրիարքը: Ասոր վրայ Սեղա

բոսեան և Աղասեան էֆ. ներք յայտարարեցին թէ ոչս անպահով վիճակին մէջ չեն կրնար նիստի գալ այլևս, ինչոր Տ. ք. Սեդրոսեան էֆ. կրկնեց ի վերջոյ Ս. Պատրիարքին ուղղուած նամակով մը:

Ուրբաթ օրը Սառն Ժողովը, արտասովոր նիստի մը մէջ, որուն ներկայ էին սոսոր եկեղեցական և վեց աշխարհական անդամներ, մեծամասնութեամբ որոշեց պահանջաբանեալ հրաժարական մատուցանել Ազգ. Ժողովին: Այս որոշումին յանգած են՝ սո տրամաբանութեամբ որ, թէև իրենք ղէպքէն վստիսալով տեղի չեն տար, բայց այսպիսի արարքի մը անպատիժ մնալով տեղի չեն տար, բայց այսպիսի արարքի մը անպատիժ մնալէն կը հետեւնեն որ Պատրիարքարանին ձեռքը ու է բարոյական աղղեցութիւն չէ մնացած, ազգային իշխանութիւնը տկարացած է և անիշխանութիւն կը տրի, որուն մէջ ազգ. պաշտօն վարել անկարելի կը դառնայ. հետեւապէս Ազգ. Ժողովը պէտք է որոշէ թէ նմանօրինակ պարագաներու մէջ ինչպէս պէտք է շարժիլ, Ազգ. Իշխանութիւնը յարգել տալու համար օրինական միջոցի պէտք է դիմել թէ ոչ: Այս իմաստով պատրաստուեցաւ հրաժարագիրը, զոր ստորագրեց ներկայ անդամոց մեծամասնութիւնը, բաց ի Տ. Յուսէփ, Տ. Սուքիաս և Տ. Արէլ ք. ներէն և Արամ էֆ. Հալաճեանէ որք համաձայն չէին հրաժարման: Այս միջոցին Ս. Պատրիարքը կրկնեց թէ ինք ալ արդէն իր հրաժարականը պիտի մատուցանէ: Վարչութեան անդամները պատասխանեցին թէ իրենք պաշտօն չունին ստանալու Պատրիարքին հրաժարականը, որ Ազգ. Ժողովոյ գործն է:

Ս. Պատրիարքը՝ Հոկտ. 19 թուակիր հրաւիրագրով մը Հոկտ. 22 ուրբաթ օրուն համար նիստի հրաւիրեց Ազգ. Ժողովը, օրակարգի միակ խնդրի որոշելով՝ Հրաժարական Ազգ. Կեդր. Վարչութեան իստոն Ժողովոյ: Թերթը մամուլը դրուած պահուն (ուրբաթ առաւօտ), դեռ յայտնի չէր թէ ինչ պիտի ըլլայ Ազգ. Ժողովին որոշումը:

ԱՐՏՈՆԱՏԷՐ


ՀՄԱՅՆԱԿ ԲՆՆԵ. ԷՐՍԷՐՃԵԱՆ.

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ԶԱՐՄԱՅՐ ԲՆՆԵ. ԿԷՋԻՐԵԱՆ.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

Զաւմաւնըյաւ, Յակոբեան խան



ՅՈՎՀԱՆՆԷՍ Գ. ՀԵՌԼԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

(Վկայեալ Կայսերական քաղաքական վարժարանէն)

Պէշկիքաշ, Հայոց Եկեղեցիին ճիշդ դիմացը:

Կը դարմանէ ակռայի եւ լինտերու ամէն տեսակ հիւանդութիւններ. կը շինէ բնականին յար եւ նման ակռաներ քաղաքի կամ ոսկի փլափլ վրայ: Չափէն աւելի փտած ակռաները քաղաքէն կ'ընէ. կը շինէ նաեւ dent à pont ամբողջ ոսկիէ կամ քոստրիւնէ:

Հիւանդ կ'ընդունի Դ. և Ուր. օրերը առաւօտէն մինչեւ երեկոյ. ուրիշ օրեր իրիկուն ժամը 12էն մինչեւ 3 (Ը. Թ.): Ատկէ դուրս մասնաւոր ժամադրութիւն:

Կիրակի օրերը մինչեւ կէս օր ձրի:

ԱՏԱՅՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ԳՐՈՅ ԲՐՈՅ, ծրագրեց Դարեգին Վ. Սրտանձեւանց: Գին 5 զրշ.:

ԱՍԱՌՈՒՆՅՈՒ ԴԱՒԻԹ ԿԱՄ ՄՀԵՐԻ ԴՈՒՌ, ծրագրեց Գ. Վ. Սրտանձեւանց, Գին 2/ զրշ.:

Սրտանձեւանց ողբացեալ Դարեգին եպիսկոպոսի այս իսկատիպ գործերն հրատարակուած են Փիշտօֆճեան եղբարց կողմէ: Դիմել «Արամազդ» գրատուն, Ղալաթիա, Դուլէ Դարուսու:

ԱՐԿԱՄԻՐ ՎԱՐԴԱՅ ՄԱՄԻԿՈՆԵՆՈՅ, գրեց Հ. Սահակ Վ. Թոռնեան, տպ. Վիեննա, գին 10 զրշ., դիմել Գրլըճճեան գրատուն, Չաքմաքճըլար:

ԱՐԴԻ ԱՆՀԱՒԱՏՈՒԹԻՒՆԸ, քարոզներ՝ անհաւատներու դիտար առարկութիւններուն դէմ: Գրեց Վեր. Կ. Յովնան Յ. Սիւսանեան, երէց Հայ Աւետարանականաց Կարնոյ, տպ. Մարզուման՝ Ներսո և Սրապեան: Գին 4 զրշ.:

Դիմել Մարզուման՝ տպագրիչին, կամ Կարին՝ հեղինակին:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԵՐԸՃԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ. — Կրօնի Դասեր, Քրիստոնեական եկեղեցւոյ վարդապետութիւնը: Գին 5 զրշ.:

ՆՈՅՆ. — Կրօնի դասեր, Քրիստոնեական բարոյականը: Գին 5 զրշ.:

Տաղանդաւոր հեղինակը, երկրորդական վարժարաններու և բարձրագոյն կարգերու համար ֆրանս. լաւագոյն հեղինակներու հետեւողութեամբ, և Հայ Եկեղեցւոյ վարդապետութեանց համաձայն պատրաստած է այս երկու հատոր դասագիրքերը կրօնական և բարոյական ուսմանց, որոնք իրենց ամբողջ ձեւին տակ այնքան լաւ կերպով կը խտացնեն քրիստոնէական բարոյականը և եկեղեցական վարդապետութիւնները, ցարդ հրատարակուած դասագիրքերուն մէջ լաւագոյն տեղը գրաւելով: Ջերմապէս կը յանձնարարուի կրթական վարիչներուն: Երկու գործերն ալ վաւերացած են Ազգ. Կեդր. Վարչութեան Կրօն. Ժողովէն:

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ. — Դանձաւաւ, ընթերցանութեան գիրք, տարրական դասընթացք, 5 զրշ.:

Նոյն, միջին դասընթացք, Գ. տպագրութիւն, 8 զրշ.:

Ծանօթ գրող Արամ Էֆ. Անտոնեանի սոյն ընթերցանութեան գիրքերը, ճաշակաւոր և զիտակից ընթերցանութեամբ եղած քաղուածներ՝ Հայ և օտար լաւագոյն հեղինակներէ, կը յանձնարարուին դպրոցական վարիչներուն, իրենց մաքուր տպագրութեամբ (Օ. Արզուման) և այն մեթոտիկ ուղղութեամբ որ Գանձարանի առանձնայատուկ առաւելութիւնն եղած է, և ապահոված է անոր յաջողութիւնը: 5—5